# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N ՀՀ Ո ՀՄԱԱՊՁԲ-2021-ԱՎՎ/ԱՆՁ-25

«21» 04 2021թ.

ք. Երևան

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ.Մովսիսյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Լեհական արժեթղթերի արտադրամաս>> ԲԸ-ն, ի դեմս արտասահմանյան բաժնի տնօրեն՝ Մ.Սադեցկայի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **106 755 000** (մեկ հարյուր վեց միլիոն յոթ հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ, ԱԱՀ-ն ներառյալ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական [illegible] ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների

կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ հրատապ հրատապ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ հրատապ հրատապ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ

կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը։ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը։ Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից։

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով։ Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով։

8.11 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ։ Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը։

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը։

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

**ՀՀ ոստիկանություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության**
**աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/Հ 9000011021947**
**ՀՎՀՀ 015[illegible]**
**հեռ. 59-60-39**
**Էլ. Փոստ: [illegible]**

[illegible]
/ՀՀ ոստիկանության [illegible]

(ստորագրություն)

**ՎԱՃԱՌՈՂ**

**Polska Wytwornia Papierow Wartosciowych S.A.**
**Լեհական արժեթղթերի արտադրամաս ԲԸ**
**Հասցե՝ Սանգուշկի փող. 1**
**00-222 Վարշավա, Լեհաստան**
**003-138922-001 «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ,**
**PL34-1280-0003-0000-0030-0439-7026**
**«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Լեհաստան» ՓԲԸ**

---------------------
**(ստորագրություն) Կ.Տ**

Sales Director
Marzena Sadecka

Հավելված N 1
«21» 04 2021 թ. կնքված
ՀՀ Ո ՀՄԱԱՊԶԲ-2021-ԱԿՎ/ԱՆՁ-25 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| [illegible] | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գին/ՀՀ դրամ | ընդհանուր գին/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման հասցեն | մատակարարման ենթակա քանակը | մատակարարման ժամկետը** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 22451100/11 | Անձնագրեր | Տես ստորև | հատ | 5337,75 | 106 755 000 | 20 000 | Ք.Երևան, Դավիթա շեն 4-րդ թաղ. 17/10 | 20 000 | Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 40 օր հետո 40 օրացուցային օրվա ընթացքում 3000 հատը, 120 օրացուցային օրվա ընթացքում 6000 հատը, 240 օրացուցային օրվա ընթացքում 11000 հատը, բայց ոչ ուշ քան 20,12,2021թ. |

ՀՀ քաղաքացու կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող անձնագրի բլանկները տպագրել «Հայաստանի Հանրապետության
...ղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 05.04.2012 թվականի N411-Ն որոշման և ICAO-ի պահանջների համաձայն ՀՀ-
...մ ներկայումս տպագրվող և տրամադրվող կենսաչափական անձնագրի նմուշի տեխնիկական բնութագրին համապատասխան:

Անձնագրի բլանկների համարները պետք է սկսվեն BA 357115X համարով և ավարտվեն BA 377114X համարով:

Անձնագրի բլանկները պետք է փաթեթավորված լինեն 100 անձնագիր պարունակող թղթե (կարտոնե) արկղերի մեջ, որոնք հետագայում
...մռվում ու դասավորվում են 1000 անձնագիր տարողության կարտոնե արկղերի մեջ:

Մինչև ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն տեղափոխությունը կատարվում է Կապալառուի ուժերով:

Նախատեսվում է 2021 թ. կարիքների համար:

Ստորև ներկայացնում ենք ներկայումս գործող կենսաչափական անձնագրի բնութագիրը.

**1. Ստանդարտը**՝ ICAO 9303 1-ին և 2-րդ մասերի պահանջներին համապատասխանող ընդունված ձևաչափ:

**2. Տեխնիկական ցուցանիշները**՝ չափսեր, կշիռ, գույն, դիմադրություն, հզորություն, խտություն և այլն.

**3. Տապիկ**՝ պետք է լինի բարձրորակ, ճկուն, պլաստիկ, որը դիմակայուն է ջերմությանը (180° ցելսիուս), քիմիկատներին, պատռմանը, ավությանը և ջրաթափանցությանը: Այն պետք է ներառի Հայաստանի Հանրապետության զինանշանը «արդյունաբերական ոսկեգույնով»: ռաքին շապիկը պետք է զարդարվի ICAO-ի լոգոյով, որը լրիվ համապատասխանում է էլ. անձնագրերին: Տապիկը պետք է պատրաստված թաղանթապատ թղթից՝ << Securalin>> 9pt <<CL>>, թղթի բաղադրությունը՝ 30% բամբակ, 70% բջջանյութ՝ բարձր ամրության համար: ղթը պետք է պարունակի կարմիր և կապույտ անտեսանելի մանրաթելեր, որոնք հնարավոր է տեսնել միայն ուլտրամանուշակագույն լույսի քո, պարունակում է նաև որոշակի տարրեր, որոնք զգայուն են քիմիական մի քանի նյութերի նկատմամբ և կեղծման դեպքում գունավոր րբեր գծեր են մնում:

**4.Ներքին էջերը**՝ կենսագրական էջը պետք է նախատեսված լինի անհատական տվյալներ լրացնելու համար՝ համապատասխան ICAO-ի հանջներին: Կենսաչափական անձնագրի բլանկը պետք է կարված լինի այնպիսի տեխնոլոգիայով, որպեսզի էջեր ավելացնելը, կասեցնելը կամ փոխարինելը անհնար լինի: Կարելու համար անհրաժեշտ է օգտագործել ուլտրամանուշակագույն ֆլյուրոսցենտ կարման եր: Պետք է օգտագործվի այնպիսի ջրանիշ, որը հնարավորություն կտա ձևավորելու «ՀՀ» տառերը և Հայաստանի Հանրապետության անշանը կենսագրական և վիզա պարունակող էջերում ներառելով երկու կամ ավելի մոխրագույն մակարդակներ: ՀՀ զինանշանի գույները առել <<ՀՀ զինանշանի մասին>> ՀՀ օրենքի համաձայն:

**5. Պաշտպանիչ թաղանթ**՝ հոլոգրաֆիկ, թափանցիկ թաղանթ՝ ՀՀ զինանշանով պաշտպանիչ գրաֆիկական էլեմենտով:

**6. Չափսերը**՝ կենսաչափական անձնագրի չափսերն են 88մմ (+/- 0.75մմ)x125մմ (+/- 0.75մմ)՝ համաձայն անձնագրեր կարդացող սարքերի մար նախատեսված ICAO-ի պահանջների: Անձնագիրը պետք է ունենա 40 էջ՝ բացի շապիկից:

**7. Ոչ կոնտակտային պահոց**՝ MRTD-ում օգտագործելու համար ոչ կոնտակտային IC-երը պետք է համապատասխանեն 14443 Տիպ A կամ կ B ISO/IEC ստանդարտին, պահոցը պետք է ունենա առնվազն 72ԿԲ տվյալների պարունակության հնարավորություն: Պահոցի «զուտ» րողությունը պետք է բավարար լինի ICAO-ի նկարագրություններին համապատասխան բոլոր տվյալների հավաքագրման և փոխանցման մար, որը ներառում է դեմքի պատկերը և մատնահետքերը: Պահոցը պետք է ապահովի հակաբախումը ISO/IEC 14443 ստանդարտին: Այն տք է լինի միկրոպրոցեսորի հիման վրա միջին հոսանքի պարամետրերով ISO/IEC 14443 ստանդարտին համապատասխան: Տվյալների փոխանցման արագությունը պետք է լինի առնվազն 424կբ/վ: <<Օն-բորդ>> օպերացիոն համակարգը պետք է ամբողջովին համապատասխանի O/IEC 7816-4 ստանդարտին:

**8. Ալեհավաք**՝ IC ոչ կոնտակտային ալեհավաքը, որը համատեղելի է ISO/IEC 14443-ի հետ, պետք է բավարարի հանդուրժողականության ահմանները տարբեր էլեկտրոմագնիսական, ֆիզիկական, մեխանիկական և այլ ազդեցությունների հետևանքով խափանումներից պահովագրելու անհրաժեշտ պայմաններին: Նրա տեխնիկական պարամետրերը պետք է համատեղելի լինի գլոբալ փոխգործելի ընթերցող ամակարգերի հետ:

**9. Օգտագործումը**՝ կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող անձնագրի բլանկը պետք է նախատեսված լինի առնվազն 10 տարի գործելու համար:

**10. Համարակալումը**՝ գրքույկի համարակալումն իրականացվում է մեխանիկական կամ լազերային պերֆորացիոն տեխնիկայի ությամբ, էջի վերին հատվածում՝ սկսած 3-րդ էջից, բացառությամբ շապիկից (վերջնամաս):

**11. Ձևավորումը**՝ ապահովել ներկայումս ուժի մեջ գտնվող ՀՀ կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող անձնագրի արտաքին տեսքը, ներառյալ տեսանելի և ուլտրամանուշակագույն լույսի տակ տեսանելի տարրերը: Գույները պարտադիր կերպով պետք է ամապատասխանեն ՀՀ-ում ուժի մեջ գտնվող կենսաչափական անձնագրի գույներին:

Бланки биометрических паспортов напечатать согласно закону §О паспорте гражданина Республики Армения¦, решениям
вительства РА N411-Ն от 05.04.2012г и ICAO на основании образца ныне печатающихся в РА биометрических паспортов в соответствии
ической характеристикой.

Номера паспортных бланков должны начинаться с ВА 357115X номера и заканчиваться номером ВА 377114 X.

Паспортные бланки должны быть упакованы по 100 паспортов в одной картонной коробке, которые в дальнейшем опечатываются и
адываются в картонную коробку вместимостью 1000 паспортов.

Перевозка паспортов до паспортно визового управления РА осуществляется при помощи подрядчика.

Предусмотрено для нужд 2021 г.

Представляем **характеристику** биометрических паспортов.

**1. Стандарты:** принятый формат соответствующий требованиям 1-ой и 2-ой частей ICAO 9303.

**2. Технические показатели:** размер, вес, цвет, сопротивляемость, мощность, плотность и т.д.

**3. Обложка:** материал должен быть высококачественным, гибким, пластичным, который может противостоять температуре (180° по
льсию), химикатам, влажности и промоканию.Он должен содержать герб Республики Армения §промышленным золотым цветом¦, на
ложке должен быть логотип ICAO, который соответствует электронным паспортам. Обложка должна быть из бумаги << Securalin>> 9pt
CL>> с покрытием. В состав бумаги входит 30% хлопка, 70% целлюлозы для высокого качества.

Бумага должна содержать красного и синего цветов невидимые волокна, которые можно обнаружить только под ультрафиолетовым
етом, должна быть химически чувствительной.

В целях безопасности использовать литографическую, трудно поддаваемую расшифровке чернила, чтобы была возможность
явления попыток подделки любых физических преображений.

**4.Внутренние страницы:** Страница для биографии должна соответствовать требованиям ICAO для заполнения личных данных.

Бланк биометрического паспорта должен быть пришит такой технологией, которая не позволяла бы дополнить или уменьшить
личество страниц, или поменять страницы без очевидного вреда.

Для того чтобы пришить, необходимо использовать ультрафиолетовые флюросцентные нити. Нужно употребить такой водяной знак,
торый даст возможность оформить буквы «РА» и герб Республики Армения на страницах автобиографии и визы включая два или более
рых оттенков. Цвета герба РА использовать согласно закону << О гербе РА>>.

**5. Защитный слой:** голографический прозрачный слой с гербом РА защитным графическим элементом.

**6. Размеры:** размеры биометрического паспорта 88мм (+1-0.75мм)×125мм (+1-0.75мм) согласно требованиям приборов ICAO,
оторые читают данные паспортов. Паспорт должен иметь 40страниц без обложки.

**7. Бесконтактные базы:** Для использования MRTD бесконтактные IC-u должны соответствовать 14443 Тип А или Тип В ISO/IEC
тандартам. База должна иметь возможность сохранения данных минимум 72 КБ.

Обiем базы должен соответствовать всем описаниям ICAO для сбора и передачи всех данных, включая изображение лица
фотографию) и отпечатки пальцев. База должна обеспечить,стандарты ISO/IEC 14443, так, чтобы не было столкновения. Она должна быть

снове микропроцессора средней мощности соответствующей параметрам стандарта ISO/IEC 14443. Скорость передачи данных должна
ь минимум 424кб/с.
Операционная система <<Он-борд>> должна полностью соответствовать ISO/IEC 7816-4 стандарту.

**8. Антенна:** IC бесконтактная антенна, которая совмещается с ISO/IEC 14443, должна удовлетворять условиям об обеспечении гарантии
азных поломок (электромагнитных, физических, механических и других воздействий). Ее технические данные должны соответствовать
бальным взаимодействующим читаемым системам.

**9. Использование:** Имеющий биометрические данные паспотрный бланк, должен быть предусмотрен для употребления минимум на 10

**10. Нумирация:** Нумирация книжки производится с помощью механической или лазерной перфорационной техники в верхней части
аницы, начиная с 3-ой страницы, не считая обложки ( последняя часть).

**Оформление:** Обеспечить внешний вид в настоящее время действующего биометрического паспорта, включая видимые и водяные
ки, которые видны под ультрафиолетовым светом. В обязательном порядке цвет паспорта должен соответствовать действующим в
нное время цветам пастортов в РА.

**ԳՆՈՐԴ**
ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 9000011021947
ՀՎՀՀ 015333334
հեռ. 59-60-39
Էլ. Փոստ: policetv.gnumner@mail.ru
[illegible] Մովսիսյան
/ոստիկանության [illegible]/
ստորագրություն

**ՎԱՃԱՌՈՂ**
Polska Wytwornia Papierow Wartosciowych S.A.
Լեհական արժեթղթերի արտադրամաս ԲԸ
Հասցե՝ Սանգուշկի փող. 1
00-222 Վարշավա, Լեհաստան
003-138922-001 «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ,
PL34-1280-0003-0000-0030-0439-7026
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Լեհաստան» ՓԲԸ

Sales Director
(ստորագրություն) Կ.Տ
Marzena Sadecka

Հավելված N 2
<<21>> 04 2021թ.
*ՀՀ Ո ՀՄԱԱՊՁԲ-2021-ԱՎՎ/ԱՆՁ-25 ծածկագրով գնման պայմանագրի*

**Վճարման ժամանակացույց**

ՀՀ դրամ

| ...վերով ...ատեսված ...փարժ ...նի ...մարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ապրանքի | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 22451100/11 | **Անձնագրեր** | | | | 37 753 100 | 37 753 100 | 37 753 100 | 70 112 900 | 70 112 900 | 70 112 900 | 106 755 000 | 106 755 000 | 106 755 000 | 106 755 000 |

**ԳՆՈՐԴ**
ՀՀ ոստիկանություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 98000...1021947
...015833334
...60-39
...ner@mail.ru
...Մանուկյան
(ստորագրություն)

**ՎԱՃԱՌՈՂ**
**Polska Wytwornia Papierow Wartosciowych S.A.**
Լեհական արժեթղթերի արտադրամաս ԲԸ
Հասցե՝ Սանգուշկի փող. 1
00-222 Վարշավա, Լեհաստան
003-138922-001 «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ,
**PL34-1280-0003-0000-0030-0439-7026**
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Լեհաստան» ՓԲԸ

---------------------------
(ստորագրություն) Կ.Տ.

Sales Director
Marzena Sadecka

Հավելված 3
ՀՀ ֆինանսների նախարարի
2017 թվականի հուլիսի 18-ի
N 356-Ն հրամանի

«Հավելված
ՀՀ ֆինանսների նախարարի
2017 թվականի մայիսի 20-ի
N 230-Ն հրամանի

Պայմանագրի կողմ
______________________
______________________
գտնվելու վայրը ________
հհ ____________
հվհհ ____________

Պատվիրատու
______________________
______________________
գտնվելու վայրը ________
հհ ____________
հվհհ ____________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________
______________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.

Պայմանագրի համարը՝ __________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ____________ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները

| N | Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«     »        20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ   N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________
Գնորդի անվանումը                                    Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20   թ. ______________-ին կնքված N ______________
պայմանագրի կնքման ամսաթիվը                    պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ______________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________
ազգանուն, անուն

______________
Ստորագրություն

______________
ազգանուն, անուն

______________
ստորագրություն